

Անձնակազմի օտար լեզվի վերապատրաստման ծրագիր

Բովանդակություն

1. Կորպորատիվ ուսուցման անհրաժեշտությունը
2. «Յունիվերս» լեզվի կենտրոնի մասին
 2. 1. Ընդհանուր տեղեկություն
 2. 2. Մեր առավելությունները
 2. 3. Մեր հաճախորդներն ու գործընկեր կազմակերպությունները
3. Կորպորատիվ ուսուցում
 3. 1. Առաջարկվող ծառայություններ
 3. 2. Ուսումնական ծրագիր
4. Ակնկալվող արդյունքներ
5. Գնացուցակ
6. Կոնտակտային տվյալներ

1. Կորպորատիվ ուսուցման անհրաժեշտությունը

Օտար լեզուն մասնագետների համար ոչ միայն հաղորդակցման միջոց է, այլև մասնագիտական աճի անհրաժեշտ պայման: Բարելավելով օտար լեզվով հաղորդակցվելու հմտությունները՝ աշխատանքային թիմը հնարավորություն կստանա առավել արդյունավետ օգտագործելու իր ողջ ներուժը: Արդյունքում, օտար լեզվի իմացության խորացմանը զուգահեռ, դուք կկարողանաք.

- Լիարժեք օգտվել օտարալեզու աղբյուրներից
- Ճիշտ ընկալել ստացված տեղեկությունը և փոխանցել այն
- Զարգացնել օտար լեզվով նամակագրություն և հեռախոսային խոսակցություն վարելու հմտությունները
- Վարժ բանակցություններ վարել թիրախային լեզվով

Դասընթացները կարող են անցկացվել ինչպես ձեր կազմակերպությունում, այնպես էլ մեր կենտրոնի հարմարավետ լսարաններում:

2. «Յունիվերս» լեզվի կենտրոնի մասին

2. 1. Ընդհանուր տեղեկություն
2. 2. Մեր առավելությունները
2. 3. Մեր հաճախորդներն ու գործընկեր կազմակերպությունները

2. 1. Ընդհանուր տեղեկություն

Այսօր, երբ ժամանակակից աշխարհում ավելի է կարևորվում օտար լեզվի իմացությունը, «Յունիվերս» լեզվի կենտրոնն ընձեռում է մեծ հնարավորություն՝ կատարելագործելու լեզվի ձեր իմացությունը, հեշտությամբ տիրապետելու մեկից ավելի լեզուների, դառնալու առավել մրցունակ մասնագիտական ոլորտում: Կենտրոնի հիմնական սկզբունքն է՝ անհատական մոտեցում յուրաքանչյուր ուսանողին: ULC-ն առանձնանում է դասավանդման նորագույն մեթոդներով, տեխնիկապես հագեցած, հարմարավետ լսարաններով, միջազգային որակավորում ունեցող, ինչպես նաև լեզվակիր մասնագետներով:

2. 2. Մեր առավելությունները

«Յունիվերս» լեզվի կենտրոնն այսօր ունի բավականաչափ դրական փորձ օտար լեզուների կորպորատիվ դասավանդման ոլորտում և տիրապետում է այն արդյունավետորեն իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսներին ու առավելություններին.

1. Կորպորատիվ ուսուցման ոլորտում զգալի փորձ

- ✓ Մենք աշխատում ենք մի շարք կազմակերպությունների հետ
- ✓ Օտար լեզուների դասավանդումը մեր գործունեության հիմնական տեսակն է
- ✓ Մեր մասնագետները կարող են պարապմունքներն անցկացնել ձեր իսկ կազմակերպությունում
- ✓ Կորպորատիվ ուսուցման փորձ և հաստատուն կապ կազմակերպության HR գործակալների հետ

2. Դասավանդողների մասնագիտական բարձր որակներ

- ✓ Յուրաքանչյուր դասավանդողից խիստ մասնագիտական պահանջներ
- ✓ Դասավանդողների նախնական և ընթացիկ թեստավորում
- ✓ Դասավանդողների ընտրություն կորպորատիվ ուսուցման համար
- ✓ Միջազգային որակավորում ունեցող մասնագետներ

3. Պարզություն և գործունեության թափանցիկություն

- ✓ Փորձնական դասի անցկացում
- ✓ Մասնագետների կենսագրական տվյալների տրամադրում
- ✓ Անհամաձայնությունների դեպքում մասնագետի փոխարինում

4. Դասավանդման արդյունավետ ծրագրեր

- ✓ Ստանդարտ ծրագրերից մեկի ընտրություն (ընդհանուր, գործնական կամ մասնագիտական)
- ✓ Յուրաքանչյուր ծրագրի համար ուսումնական նյութերի ընտրություն մի քանի դասագրքերի, ինչպես նաև թվային նյութերի հիման վրա
- ✓ Հաճախորդ կազմակերպության կողմից ծրագրի հաստատում մինչև պարապմունքների սկսվելը
- ✓ Երկու ծրագրերի զուգակցման հնարավորություն (General+Business, General+ ESP)

5. Վճարման ճկուն համակարգ

- ✓ Գնային ճկուն համակարգ
- ✓ Վճարման տարբեր ձևեր
- ✓ Զեղչերի առկայություն (մինչև 10%)
- ✓ Ցածր սակագներ

6. Ուսուցման երաշխավորված որակ

- ✓ Ուսուցման որակի խիստ հսկողություն
- ✓ Հաճախորդ կազմակերպության գոհունակության ապահովում դասավանդման որակով
- ✓ Կազմակերպության HR գործակալին արդյունքների հաշվետվության տրամադրում
- ✓ Անհրաժեշտության դեպքում համապատասխան շտկող միջոցների ձեռնարկում

2. 3. Մեր հաճախորդներն ու գործընկեր կազմակերպությունները

Իրենց աշխատակիցների՝ օտար լեզվի ուսուցումը մեզ են վստահել բազմաթիվ կազմակերպություններ՝ հրատարակչություններ, տուրիստական ընկերություններ, բանկեր, բժշկական և ուսումնական հաստատություններ: «Յունիվերս» լեզվի կենտրոնն իր տրամադրության տակ ունի գրավոր երաշխավորագրեր՝ տրամադրված հաճախորդ կազմակերպությունների կողմից՝ որպես երախտագիտության արտահայտման միջոց:



3. Կորպորատիվ ուսուցում

3. 1. Առաջարկվող ծառայություններ

3.1.1. Մենք տրամադրում ենք կորպորատիվ ուսուցման ամբողջական համակարգ.

- ✓ Աշխատակիցների լեզվի իմացության մակարդակի ստուգում հենց կազմակերպությունում կամ օնլայն,
- ✓ Թեստավորման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն,
- ✓ Թեստավորման արդյունքների հիման վրա խմբերի ձևավորում:

Խմբերը ձևավորվում են՝ հիմնվելով թեստավորման արդյունքների, նպատակների և ուղղվածության վրա, ինչպես նաև, հաշվի առնելով ուսուցման ինտենսիվությունը

3.1.2. Ուսումնական ծրագրի հարմարեցում խմբի պահանջներին և կարիքներին.

Յուրաքանչյուր խմբի համար կատարվում է ծրագրի համապատասխանեցում, ինչն առավել արդյունավետ կդարձնի ուսումնական գործընթացը: Դասավանդվող թեմաների՝ ժամերի պլանավորում, նյութերի ընտրություն, նպատակային ցուցիչների և դասընթացի ավարտին հիմնական արդյունքների որոշում:

3.1.3. Կազմակերպության աշխատակիցների ուսուցում.

- ✓ Ուսուցումն անցկացվում է կազմակերպությանը հարմար (նախօրոք ամրագրված) ժամերին
- ✓ Ուսուցումը կարող է կազմակերպվել ինչպես կենտրոնի տեխնիկապես հագեցած ժամանակակից և հարմարավետ լսարաններում, այնպես էլ հաճախորդ կազմակերպության տարածքում
- ✓ Ուսուցումն անցկացվում է միայն բարձր որակավորում ունեցող և վերապատրաստված մասնագետների կողմից
- ✓ Ուսուցումն անցկացվում է 5-8 հոգանոց խմբերի հետ

- ✓ Կենտրոնն ընձեռում է նաև անհատական ուսուցման հնարավորություն
- ✓ Անհրաժեշտության դեպքում մասնակիցների արդյունքների, առաջադիմության և հաճախումների հաշվետվությունների տրամադրում

3.1.4. Ուսուցման որակի վերահսկում.

Վերահսկումն անցկացվում է հանրապետության բուհերում դասավանդող, համապատասխան բարձր միջազգային որակավորում ունեցող՝ կենտրոնի մասնագետ-մեթոդիստների կողմից:

Մոնիտորինգի ընթացքում անցկացվում է մասնագետի կողմից ուսուցման մեթոդական սկզբունքների պահպանման, աշխատանքը բարեխիղճ կատարելու, ինչպես նաև սովորողների առաջադիմության վերահսկում:

Դասընթացի ավարտին անցկացվում է ամփոփիչ քննություն, և տրվում է վկայական:

3. 2. Ուսումնական ծրագիր

«Յունիվերս»լեզվի կենտրոնը մասնագիտանում է լեզուների կորպորատիվ դասավանդման մեջ:

- ✓ Ծրագրերն ու դասի պլանները մանրակրկիտ կերպով մշակվում են
- ✓ Կիրառվում են ժամանակակից լավագույն դասագրքերը

Ներկա պահին կորպորատիվ հաճախորդների առաջարկի մեջ ներառված են հետևյալ ուսումնական ծրագրերը.

- ✓ Ընդհանուր անգլերեն (գերմաներեն, ռուսերեն)
- ✓ Ընդհանուր + գործարար անգլերեն (գերմաներեն, ռուսերեն)
- ✓ Գործարար անգլերեն (գերմաներեն, ռուսերեն)
- ✓ Մասնագիտական անգլերեն (գերմաներեն, բուսերեն)
- ✓ Նպատակային անգլերեն (գերմաներեն, ռուսերեն)

Մասնագիտական անգլերենի (գերմաներեն, ռուսերեն) համար առաջարկվում են հետևյալ ուղղվածությունները՝ մարքեթինգ, ֆինանսներ, իրավաբանություն, բժշկություն և հանրային ռեսուրսներ:

Նպատակային օտար լեզվի պայուղվածությունները հետևյալն են.

- Խոսակցական անգլերեն
- Աշխատանքի հարցազրույցի նախապատրաստման դասընթաց

Կազմակերպության ընտրած ծրագիրը համապատասխանեցվում է հենց տվյալ կազմակերպության կարիքներին և միտված է զարգացնելու լեզվական անհրաժեշտ հմտությունները, վստահ խոսքը, ինչպես նաև անգլախոս գրուցակցի խոսքի ընկալումը:

4. Ակնկալվող արդյունքներ

Հաճախորդ կազմակերպության համար ուսուցման ակնկալվող հիմնական արդյունքը և ձեռքբերումներն են աշխատակիցների կողմից օտար լեզվին գրագետ և վստահ տիրապետումը, մասնագիտական ոլորտում կիրառելու համար բավարար լեզվական գիտելիքների ձեռքբերումը:

Ընդ որում.

- ✓ Ջգալիորեն կրճատվում է օտար լեզվով նամակների և փաստաթղթերի կազմման վրա ծախսվող ժամանակը
- ✓ Նվազում է օտարալեզու տպագիր և թվային աղբյուրներից տեղեկություններ քաղելու վրա ծախսվող ժամանակը
- ✓ Մեծանում է միջազգային գիտաժողովներին, գործնական բանակցություններին ինքնուրույն՝ առանց թարգմանչի ներկայանալու հավանականությունը
- ✓ Ընդլայնվում է արտերկրյա գործընկերների հետ գործնական հանդիպումների ժամանակ ավելի անկաշկանդ հաղորդակցումը

✓ Բարձրանում է կազմակերպության մակարդակը և հեղինակությունը միջազգային գործընկերների մոտ

Անշուշտ, այս առավելությունները տնտեսական նշանակություն ունեն յուրաքանչյուր կազմակերպության համար:

Լեզվական թիրախային ցուցիչները, որոնք արտացոլում են ուսուցման արդյունավետությունը և գնահատվում են բալային համակարգով, հետևյալն են.

✓ Ակտիվ բառապաշարի ձեռքբերում յուրաքանչյուր ուսումնասիրված թեմայի համար

✓ Բանավոր խոսքի ընկալում

✓ Գրագետ գրավոր խոսք

✓ Ճիշտ արտասանություն

✓ Գրագետ և սահուն խոսք

Նշված թիրախային ցուցիչները ներառված են դասավանդման հաշվետվության մեջ:

5. Գնացուցակ

	1 խումբ (5-8 հոգի)	2 խումբ (9-15 հոգի)	3 խումբ (16-24 հոգի)	4 խումբ (25-32 հոգի)	5 խումբ (33 և ավելի)	10 խումբ և ավելի (80 և ավել)
3 ամսով պայմանագիր կնքելու դեպքում	24 000	22 000	20 000	18 000	16 000	10000
6 ամսով պայմանագիր կնքելու դեպքում	22 000	20 000	18 000	16 000	14 000	9000
1 տարի և ավել ժամկետի դեպքում	20 000	18 000	16 000	14 000	12 000	8000

- * Գները ներկայացված են մեկ անձի 10 պարապմունքի համար:
- * Կողմերի միջև կնքվում է պայմանագիր, որի համաձայն՝ վճարումը կատարվում է դասընթացն սկսելուց առաջ:
- * Անհրաժեշտության դեպքում, սույն փաթեթի կետերը կարող են վերանայվել:
- * Ներկայացված գնացուցակի մեջ ներառված չէ ուսումնական նյութերի արժեքը:
- * Գնացուցակի մեջ չի մտնում ճանապարհաճախսը (երթևեկությունը՝ տաքսիով լեզվի կենտրոնից կազմակերպություն և հակառակը), եթե մասնագետը այցելում է Ձեր կազմակերպություն:

6. Հետադարձ կապ

Հասցեն՝ «Յունիվերս» լեզվի կենտրոն, ՀՀ, 0051, ք.Երևան,
Կոմիտասի պող. 49/2

Հեռախոս՝ +37410 283 450 +374 55 283 450

Էլ. Հասցե՝ info@ulc.am, irina.vardanyan@ulc.am

Կայք՝ www.ulc@am